

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՆՆԴԱՄԹԵՐՔԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ
ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ**

**2022 ԹՎԱԿԱՆԻ
ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՏԱՐԵԿԱՆ
ԾՐԱԳԻՐ**

1. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետության սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի (այսուհետ՝ Տեսչական մարմին) 2022 թվականի տարեկան գործունեության ծրագրի (այսուհետ՝ Ծրագիր) հիմք են հանդիսացել «Տեսչական մարմինների մասին», «Սննդամթերքի անվտանգության մասին», «Սննդամթերքի անվտանգության պետական վերահսկողության մասին», «Անասնաբուժության մասին», «Բուսասանիտարիայի մասին», «Կերի մասին», «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքները, Հայաստանի Հանրապետության վարչապետի՝ 2019 թվականի դեկտեմբերի 19-ի N 1940-Լ որոշումը և այլ իրավական ակտեր:

Տեսչական մարմինը սննդամթերքի և կերի անվտանգության, անասնաբուժության և բուսասանիտարիայի բնագավառներում վերահսկողություն և օրենքով սահմանված այլ գործառույթներ իրականացնող Հայաստանի Հանրապետության կառավարությանը ենթակա մարմին է, որն, օրենքով սահմանված կարգով, կիրառում է պատասխանատվության միջոցներ սննդամթերքի և կերի անվտանգության, անասնաբուժության և բուսասանիտարիայի բնագավառներում՝ հանդես գալով Հայաստանի Հանրապետության անունից:

Ծրագիրը ներառում է Տեսչական մարմնի գործունեության իրականացման նպատակները, Տեսչական մարմնի կողմից վերահսկվող ոլորտներում իրավիճակի վերլուծությունը, ռիսկերը և առկա հիմնախնդիրների բացահայտումը, նախատեսված միջոցառումները և ակնկալվող արդյունքը, դրանց իրականացման ժամանակացույցը, այդ թվում՝ իրազեկման և կանխարգելման միջոցառումները:

2. ԾՐԱԳՐԻ ՆՊԱՏԱԿԸ

Ծրագրի նպատակն է ապահովել սննդամթերքի, կերի, անասնաբուժության և բուսասանիտարիայի բնագավառներում պետական վերահսկողության արդյունավետ իրականացումը, տեղեկատվության հավաքագրման աղբյուրները՝ ծրագրի մշակման համար, ռիսկերի վերլուծության հիման վրա վերահսկողական գործառույթների իրականացումը, առկա հիմնախնդիրների բացահայտումը, առկա ռիսկերի նվազեցումը և

վերացումը, ինչպես նաև սննդամթերքի անվտանգության ապահովմանն ուղղված այլ միջոցառումների իրականացումը:

Ներկա իրավիճակը և նպատակները ծրագրում ներկայացված են ըստ վերահսկողության հիմնական ոլորտների՝

1. սննդամթերքի անվտանգություն,
2. անասնաբուժություն,
3. բուսասանիտարիա,
4. սահմանային պետական վերահսկողություն:

ՍՆՆԴԱՄԹԵՐՔԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ

Ելնելով 2021 թվականին իրականացված ստուգումների, դիտարկումների, ուսումնասիրությունների արդյունքներից, սպառողների կողմից ստացված դիմում-բողոքների վերլուծությունից՝ ակնհայտ են դառնում Հայաստանի Հանրապետության սպառողական շուկայում մեծ ծավալների անհայտ ծագման, անվտանգությունը հիմնավորող փաստաթղթերով չուղեկցվող, կասկածելի որակ ունեցող և նույնականացում պահանջող սննդամթերքի առկայության փաստերը: Այս պարագայում անհրաժեշտություն է առաջանում ընդլայնել Տեսչական մարմնի կողմից իրականացվող վերահսկողության շրջանակները, մասնավորապես, նախորդ տարիների համեմատ, կատարել շուկայահանված սննդամթերքի ավելի լայն տեսակների լաբորատոր փորձաքննություններ և հաճախակի դարձնել վերջիններիս պարբերականությունը, այդ թվում՝ լաբորատոր փորձաքննություններ իրականացնող հավատարմագրված լաբորատորիաների կողմից գենետիկորեն ձևափոխված սննդամթերքի փորձաքննության, անասնաբուժական դեղամիջոցների մնացորդային քանակների և պեստիցիդների որոշման վերահսկողություն, որն էլ կհանդիսանա սննդամթերքի անվտանգության բնագավառում Ծրագրի իրականացման հիմնական նպատակներից մեկը:

2021 թվականին իրականացված պետական վերահսկողության արդյունքների նախնական ամփոփումը հիմք է տալիս պնդելու, որ ոլորտում դեռևս առկա են խնդիրներ, որոնց լուծման ուղղությամբ պետք է ձեռնարկվեն անհրաժեշտ միջոցառումներ: Որպես

ոլորտում առկա ռիսկեր, կարող ենք առանձնացնել կեղծված սննդամթերքի արտադրության և իրացման դեպքերը, մակնշման խախտումներով սննդամթերքի իրացման դեպքերը, ոչ պատշաճ սանիտարահիգիենիկ պայմաններում արտադրության և հանրային սննդի կազմակերպման, ինչպես նաև համապատասխանության գնահատման դաշտում առկա խնդիրները:

Տեսչական մարմնի 2022 թվականի ստուգումների տարեկան ծրագրով նախատեսվում է իրականացնել մոտ 700 ստուգում:

ՎԵՐԱՀՍԿՎՈՂ ՈԼՈՐՏՈՒՄ ԻՐԱՎԻՃԱԿԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԱՌԿԱ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԻ ԲԱՑԱՀԱՅՏՈՒՄԸ

2021 թվականին իրականացված ուսումնասիրությունները բացահայտեցին, որ անհրաժեշտ է վերակազմավորել և վերագործարկել սննդամթերքի և կերի անվտանգության, անասնաբուժության ու բուսասանիտարիայի ոլորտներում Հայաստանի Հանրապետությունում կամ օտարերկրյա պետություններում գրանցված և Հայաստանի Հանրապետության տարածքում գործունեություն իրականացնող առևտրային կամ ոչ առևտրային կազմակերպությունների, անհատ ձեռնարկատերերի վերաբերյալ էլեկտրոնային տեղեկատվական բազայի վարումը (պարտադիր ներառելով տնտեսավարող սուբյեկտի փաստացի գործունեությունը, գործունեության տեսակի փոփոխությունը և դադարեցումը) և պարբերական թարմացումը:

Անհրաժեշտ է քայլեր ձեռնարկել «Սննդի շղթայի բիզնես օպերատորների ռեյտինգավորման և սննդամթերքի դասակարգման» համակարգ ստեղծելու ուղղությամբ՝ հստակեցնելով կոնկրետ չափորոշիչներ: Դա աշխարհում ընդունված գործուն միջոց է շուկայում մրցակցության խթանման համար, որը նպաստում է սննդի շղթայում տնտեսավարող կազմակերպությունների աշխատանքի բարելավմանը և թողարկվող արտադրանքի որակի ու անվտանգության բարձրացմանը:

Սննդամթերքի վերահսկողության բոլոր 4 ոլորտներում իրականացվող բարեփոխումների, անցկացվող միջոցառումների ու դրանց արդյունքների հանրային իրազեկումը ևս կարևոր խթան է վերահսկողության արդյունավետության ու թափանցիկության իմաստով:

ԱՆԱՍՆԱԲՈՒԺՈՒԹՅՈՒՆ

Վերջին տարիներին Հայաստանի Հանրապետության բնակչության շրջանում և գյուղատնտեսական կենդանիների մոտ նկատվող ընդհանուր հիվանդությունների ակտիվացման միտումները հրատապ են դարձնում հիվանդությունների դեմ համալիր միջոցառումների վերահսկողությունը: Հիվանդությունների կանխարգելման և դրանց դեմ արդյունավետ պայքար կազմակերպելու նպատակով՝ առանձնակի կարևորվում է հակաանասնահամաճարակաբանական և անասնաբուժական ուժեղացված հսկողության, արագ արձագանքման և ախտորոշիչ միջոցառումների իրականացման գործընթացների նկատմամբ վերահսկողությունը, ինչպես նաև, «Մեկ առողջություն» գաղափարի համատեքստում, շահագրգիռ կառույցների հետ համատեղ մարդկանց և կենդանիների համար ընդհանուր վարակիչ հիվանդությունների դեմ պայքարի համալիր միջոցառումների անցկացումը:

Նկատի ունենալով աշխարհում անասնահամաճարակային ներկա իրավիճակը և տարածաշրջանային երկրներում հիվանդությունների բռնկումները՝ առաջարկվում է 2022 թվականին իրականացնել Հայաստանի Հանրապետության համար սպառնալիք հանդիսացող հիվանդությունների անասնահամաճարակաբանության, կանխարգելման և պայքարի արդյունավետ միջոցների վերահսկողություն:

Անվտանգ և որակյալ կենդանական ծագման մթերքի և հումքի ստացման, բնակչությանը կենդանիների և մարդկանց համար ընդհանուր վարակիչ հիվանդություններից պաշտպանելու, ինչպես նաև անասնաբուժության բնագավառում պետական վերահսկողության պատշաճ մակարդակ ապահովելու համար նախատեսվում է 2022 թվականին հանրապետությունում իրականացնել՝

1. բրուցելոզ հիվանդության կանխարգելման և վերացման համապարփակ ծրագիր՝ Հայաստանի Հանրապետության առողջապահական և անասնաբուժական հաստատությունների հետ համատեղ, ինչը թույլ կտա հասկանալ այս հիվանդության տարածվածության իրական մակարդակը և վերահսկել բրուցելյոզը Հանրապետությունում,
2. լեյշմանյոզ հիվանդության համալիր վերահսկողություն, մասնավորապես՝ լեյշմանիոզի նկատմամբ շների հետազոտություններ,

3. դաբաղ հիվանդության մշտական ու շարունակական կանխարգելիչ և մոնիթորինգային աշխատանքներ,

4. Հայաստանի Հանրապետությունում արտադրված և Հայաստանի Հանրապետություն ներմուծված սննդամթերքում անասնաբուժական դեղամիջոցների մնացորդների մոնիթորինգ,

5. հանրապետության տարածքի անասնահամաճարակային գոտիավորում,

6. անասնաբուժության բնագավառում գործունեություն իրականացնող անասնահամաճարակային նշանակության օբյեկտների դասակարգում,

7. կենդանիների վարակիչ հիվանդությունների նկատմամբ համաճարակային իրավիճակի գնահատման նպատակով՝ մշտադիտարկում,

8. սպանդանոցներում պետական վերահսկողության նպատակային և պատշաճ իրականացում՝ սպանդանոցային ծագման մթերքի իրացումն ապահովելու համար,

9. անասնաբուժական դեղերի վաճառքի կամ իրացման փուլերում վերահսկողություն,

10. անասնաբուժական ծառայություն մատուցող անհատ ձեռնարկատերերի և իրավաբանական անձանց գործունեության նկատմամբ պետական վերահսկողություն:

Պետական վերահսկողության շրջանակներում անասնաբուժության ոլորտում նախատեսվում է իրականացնել մոտ 200 ստուգում:

ՎԵՐԱՀՍԿՎՈՂ ՈԼՈՐՏՈՒՄ ԻՐԱՎԻՃԱԿԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԱՌԿԱ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԻ ԲԱՑԱՀԱՅՏՈՒՄԸ

Համաձայն ՄԱԿ-ի Պարենի և գյուղատնտեսության կազմակերպության (ՊԳԿ) 2013 թվականի գնահատման՝ նախկին Խորհրդային Միության յոթ հանրապետություններ այժմ ընդգրկված են մարդկանց շրջանում բրուցելոզի տարածվածության ամենաբարձր մակարդակ ունեցող 25 երկրների շարքում: Բրուցելոզն էնդեմիկ հիվանդություն է Կովկասում, որտեղ այն տարածված է թե՛ մարդկանց, թե՛ կենդանիների շրջանում: Հայաստանի Հանրապետությունում կենդանիների շրջանում բրուցելոզի տարածվածության իրական մակարդակը հայտնի չէ և պատվաստումների միջոցով բրուցելոզի վերահսկողության ծրագիր չի իրականացվում: Պետական միջոցներով

Ֆինանսավորվող հականասնահամաճարակային միջոցառումներում ընդգրկված է նաև բրուցելոզի ախտորոշումը: Գյուղատնտեսական կենդանիները ենթարկվում են շճաբանական հետազոտության (խոշոր եղջերավորները՝ կովերը և արտադրող ցլերը, տարեկան 2 անգամ, մանր եղջերավոր կենդանիները՝ մայրական կազմը և արտադրող խոյերը, տարեկան 1 անգամ): Հայտնաբերված հիվանդ կենդանիները, ըստ հրահանգի, ենթարկվում են հարկադիր սպանդի: Հանրապետությունում սպանդանոցների գործարկման ակտիվության պակասի պատճառով՝ սպանդն իրականացվում է բակային պայմաններում, որն էլ նպաստում է ինֆեկցիայի անարգել տարածմանը: Հիվանդ կենդանիների հարկադիր սպանդը կազմակերպելու գործընթացում դժվարություններ են առաջանում նաև այն պատճառով, որ կենդանիների տերերը հրաժարվում են մթերատու կենդանիներին սպանդի ենթարկել: «Գյուղատնտեսական կենդանիների պատվաստում» ծրագրի պլան-ժամանակացույցի համաձայն՝ յուրաքանչյուր տարի իրականացվում և 2022 թվականին ևս նախատեսվում է իրականացնել հանրապետությունում առկա ԽԵԿ-ի և ՄԵԿ-ի ամբողջ գլխաքանակի արյան նմուշառում՝ բրուցելոզ հիվանդության ախտորոշման նպատակով: Սակայն անհրաժեշտ է հաշվի առնել նաև այն հանգամանքը, որ «Գյուղատնտեսական կենդանիների պատվաստում» ծրագրից դուրս են մնում ընկալունակ խոշոր և մանր եղջերավոր կենդանիների սեռահասակային մյուս խմբերը (ՄԵԿ-ի մայրական կազմը, հորթերը և ԽԵԿ-ի (ցուլ, երինջ) որոշ տոկոս), քանի որ ծրագիրը հաշվարկվում է կենդանատեսակների խմբերի որոշակի տեսակներով (ծրագրի հաշվարկն իրականացվում է Հայաստանի Հանրապետության Էկոնոմիկայի նախարարության կողմից): Սա նույնպես հիվանդության տարածման պատճառ է: Բրուցելոզը մարդկանց փոխանցվում է հիվանդ կենդանիներից կամ ախտահարված կենդանական ծագման մթերքների օգտագործման ժամանակ: Վերջին տարիներին հանրապետության բնակչության շրջանում և գյուղատնտեսական կենդանիների մոտ նկատվող հիվանդությունների ակտիվացման միտումները հրատապ է դարձնում հիվանդության դեմ համալիր միջոցառումների իրականացումը:

Ներկայումս լեյշմանիոզ հիվանդությունը հանրային առողջապահության գերակա խնդիրներից է: Աշխարհում հիվանդության վարակման ռիսկի ենթակա է շուրջ 350 մլն. մարդ: Աշխարհի ավելի քան 98 երկրում (այդ թվում՝ Իրան, Ադրբեջան, Թուրքիա) ամեն տարի արձանագրվում է լեյշմանիոզի 2 մլն դեպք (Վրաստանում արձանագրվել է 150-200

դեպք): Աշխարհում լեյշմանիաներով վարակված է մոտ 14 մլն. մարդ: Լեյշմանիոզի փոխանցումը տեղի է ունենում մլակների միջոցով: Վարակի աղբյուրը տարբեր կենդանիներն են՝ հիմնականում հիվանդ շները և կրծողները, իսկ որոշ ձևերի ժամանակ՝ մարդը: Մարդկանց ընկալունակությունը վարակի նկատմամբ բարձր է, ավելի հաճախ հիվանդանում են երեխաները: Հայաստանի Հանրապետությունում վարակային ախտաբանության մեջ լեյշմանիոզը պատմականորեն զբաղեցնում է կարևոր տեղ: Այն Հայաստանում տարածված է եղել մինչև նախորդ դարի 60-ական թվականները: Այնուհետև, ձեռնարկված կանխարգելիչ և հակահամաճարակային միջոցառումների շնորհիվ, հիվանդության դեպքերը վերացվել են, հանրապետությունում լեյշմանիոզի տեղական դեպքեր չեն արձանագրվել գրեթե 40 տարի, եղել են միայն այլ երկրներից ներբերված եզակի դեպքեր: Սկսած 1999 թվականից՝ Հայաստանի Հանրապետությունում կրկին արձանագրվում են ընդերային լեյշմանիոզի դեպքեր, որի դեպքում վարակի հիմանակն աղբյուրը շներն են: 1999-2019 թվականներին արձանագրվել է ընդերային լեյշմանիոզի 166 դեպք, այդ թվում՝ 7 մահվան ելքով: Դեպքերն արձանագրվել են 0-2 տարեկան երեխաների շրջանում, Սյունիքի, Տավուշի, Լոռու մարզերում և Երևանում: Վերջին տարիներին արձանագրվում է հիվանդության դեպքերի աճ և աշխարհագրական ընդլայնում՝ 2017-2018 թվականներին դեպքեր են արձանագրվել նաև Արագածոտնի և Կոտայքի մարզերում:

Հայաստանի Հանրապետությունում շների, ինչպես նաև վայրի շնագզիների շրջանում անցկացված հետազոտությունների ընթացքում Սյունիքի, Տավուշի և Լոռու մարզերի բնակավայրերում և Երևանում արձանագրվել են լեյշմանիոզի դեպքեր: Հիվանդության հետագա տարածման կանխարգելման նպատակով՝ անհրաժեշտություն է առաջանում իրականացնել առավել նպատակաուղղված և համալիր միջոցառումներ վարակի աղբյուրի հայտնաբերման և վերացման ուղղությամբ:

Գյուղատնտեսական կենդանիների վարակիչ ախտաբանության մեջ առանձնահատուկ տեղ է զբաղեցնում դաբաղը, որի բռնկումներն անասնապահությանը պատճառում են ահռելի տնտեսական վնաս՝ հատկապես հեռագնա արոտավայրեր օգտագործող տարածաշրջաններում: Դաբաղ հիվանդությունը տարածաշրջանային երկրների համար մշտական խնդիր է: Յուրաքանչյուր տարի, անասնահամաճարակային պետական միջոցառումների շրջանակում, կատարվում է դաբաղի նկատմամբ ընկալունակ

անասնաբանակի պատվաստում: Չնայած տարեկան հակադաբաղային պատվաստումներին՝ երկիրն ապահովված չէ դաբաղի բռնկումներից, որի պատճառ կարող է լինել ինչպես միջոցառումների կատարման անարդյունավետությունը, այնպես էլ օգտագործված պատվաստանյութի որակը, անասնահամաճարակային իրավիճակի թերի հսկողությունը կամ հիվանդության հսկողության բացակայությունը: Հիվանդության հսկողության արդյունավետ և միջազգային պրակտիկայում ընդունված ձևը շճամոնիթորինգն է: Թեև Հայաստանի Հանրապետությունում տարիներ շարունակ կատարվում են հակադաբաղային պատվաստումներ, և 2008 թվականից մինչև 2015 թվականը երկրում դաբաղ չի արձանագրվել, սակայն 2015 թվականի դեկտեմբերին արձանագրվել են վարակի բռնկումներ՝ պայմանավորված վիրուսի Ա տեսակով: 2016 թվականին գրանցվել է հիվանդության դեպք՝ պայմանավորված գենետիկորեն դաբաղի վիրուսի նոր՝ A AGVII, ենթատիպով: Ելնելով հիվանդության առանձնահատկությունից և տարածաշրջանային երկրներում տիրող իրավիճակից՝ անհրաժեշտ է իրականացնել մշտական և շարունակական մոնիթորինգային աշխատանքներ՝ համաճարակային կայուն իրավիճակը պահպանելու նպատակով: 2016 թվականից հանրապետությունում դաբաղ հիվանդության նոր դեպք չի գրանցվել: Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականին փետրվարի 15-ի նիստի թիվ 6 արձանագրային որոշմամբ հաստատվել է Հայաստանի Հանրապետությունում դաբաղ հիվանդության շճահետազոտության 2018-2021 թվականների ռազմավարական ծրագիրը:

Անասնահամաճարակային գոտիավորումն անհրաժեշտ պայման է կենդանական ծագման մթերքի անարգել շրջանառության համար: Կենդանիների վարակիչ հիվանդության նկատմամբ սեփական երկրի տարածքը գոտիավորած երկիրը և այդ երկրի անասնաբուժական հսկողության ենթակա բեռի ներմուծման և շրջանառության նկատմամբ վերահսկողություն իրականացնող մարմինը ցանկացած պահի կարող է և գործնականում կիրառում է գոտիավորում չունեցող երկրից բեռների ներմուծման և շրջանառության սահմանափակումներ: Հանրապետության տարածքի անասնահամաճարակային գոտիավորման բացակայությունը թույլ չի տալիս վերահսկողության համակարգի համապատասխանությամբ համեմատվել առևտրային գործընկեր պետությունների հետ և ընդունվել նրանց, մասնավորապես՝ կենդանական ծագման արտադրանքի արտահանման և իրացման հիմնական շուկա համարվող

Ռուսաստանի Դաշնության կամ այլ երկրի համապատասխան իրավասու մարմինների կողմից: Ծրագրի շրջանակում նախատեսվում է սկսել գոտիավորման գործընթաց՝ հանրապետության անասնահամաճարակային վիճակը գնահատելու և կենդանական ծագման մթերքի շրջանառության սահմանափակումները նվազեցնելու նպատակով:

Անասնաբուժության բնագավառում գործունեություն իրականացնող անասնահամաճարակային նշանակության օբյեկտների դասակարգման բացակայությունը հնարավորություն է տալիս այլ երկրների լիազոր մարմիններին ցանկացած պահի և առիթով, կարգավիճակ չունենալու պատճառաբանությամբ, չթույլատրել հայկական կազմակերպության արտադրանքի իրացումը՝ հիմնավորելով դա կարգավիճակ չունեցող կամ իր գնահատմամբ ռիսկային կազմակերպության արտադրանքի պատճառով իր երկրի կամ որոշակի տարածքի անվտանգությանն ու համաճարակային ապահովությանը սպառնացող հետևանքներով:

Անասնաբուժության բնագավառում գործունեություն իրականացնող անասնահամաճարակային նշանակության օբյեկտների դասակարգումն ըստ զոոսանիտարական կարգավիճակի թույլ կտա ունենալ առաջին հերթին արտադրող և արտահանող կազմակերպությունների դասակարգում, որն իր հերթին կնպաստի համապատասխան կարգավիճակ ունեցող կազմակերպության արտադրանքի արտահանման և իրացման կանոնակարգված կազմակերպմանը՝ բացառելով բեռն ընդունող երկրի կողմից համապատասխան հիմնավորված փաստարկներով բեռի ներմուծման սահմանափակումների կամ տարբերակված մոտեցումների կիրառումը:

Կենդանիների վարակիչ հիվանդությունների նկատմամբ համաճարակային իրավիճակի գնահատման միտումով մշտադիտարկման իրականացումը թույլ կտա գնահատել երկրի համաճարակային իրավիճակը՝ դրա տարածումը կանխելու նպատակով, ինչպես նաև ունենալ փաստաթղթավորված գործողություններ և արդյունքներ՝ անհրաժեշտության դեպքում արտաքին առևտրային գործընկեր երկրների իրավասու մարմինների կողմից կիրառվող սահմանափակումների և արգելքների կանխման և երկրի կայուն իրավիճակի փաստը հաստատող ապացույցներով:

Սպանդանոցներում պետական վերահսկողության նպատակային և պատշաճ իրականացումը թույլ կտա սահմանել անհրաժեշտ հարցերը, որոնք պետք է պետական վերահսկողության ժամանակ տրվեն տեսուչների կողմից՝ սպանդանոցի գործունեությունը

գնահատելու, խախտումներն ու թերացումները բացահայտելու և, այդպիսով, ամբողջական պատկերը ստանալու համար: Միաժամանակ, հնարավորություն կընձեռնվի լուծել բնակչությանը բացառապես սպանդանոցային ծագման մթերքով ապահովելու խնդիրը:

Ներկայումս ինչպես Հայաստանի Հանրապետությունում, այնպես էլ ամբողջ աշխարհում ակտիվ պայքար է մղվում չգրանցված դեղերի շրջանառությունը կանխելու ուղղությամբ, ուստի անասնաբուժական դեղերի վաճառքի կամ իրացման փուլերում վերահսկողությունը թույլ կտա նվազագույնի հասցնել չգրանցված դեղերի շրջանառությունը:

Անասնաբուժական ծառայություն մատուցող անհատ ձեռնարկատերերի և իրավաբանական անձանց գործունեության նկատմամբ պետական վերահսկողությունը նպատակ ունի կարգավորել մասնավոր անասնաբուժական ծառայության իրականացումը, պարզել, թե ում կողմից և ինչպես է այն մատուցվում, ինչպես են լուծվում վարակիչ հիվանդությունների կանխարգելման, չտարածման, վերացման հարցերը, ինչ երաշխիքներ կամ հիմքեր են առկա դրա համար՝ բացառելով ոչ մասնագիտական կրթություն ունեցող անձանց կողմից անասնաբուժությամբ զբաղվելու դեպքերն ու դրա հետևանքով կենդանիների, մարդկանց առողջությանը սպառնացող վտանգների առաջացման հիմքերը, չթույլատրված կամ արգելված դեղերի օգտագործման դեպքերը, հիվանդությունների տարածման մեծ հավանականությունը՝ վարակների տարածման կամ վերացման համար համապատասխան պայմանների բացակայության կամ անհրաժեշտ գործողությունների չկատարման պատճառով:

Մարդու և կենդանիների համար ընդհանուր՝ մակաբույծ որդերով հարուցված, հիվանդությունները (այսուհետ՝ բիոհեղինթոզներ՝ երիզորդներ, էխինոկոկոզ) մեծ վնաս են հասցնում երկրի տնտեսությանը: Էխինոկոկոզով տառապող մարդկանց թիվն աշխարհում գերազանցում է 1 միլիոնը: Այդ հիվանդներից շատերն ունեն ծանր կլինիկական ախտանշաններ: Ժամանակին չբուժվելու դեպքում Էխինոկոկոզը կյանքի համար սպառնալիք կարող է դառնալ: Անգամ բուժման դեպքում այդ մարդկանց կյանքի որակը զգալիորեն ընկնում է: Բշտային էխինոկոկոզի պատճառով՝ ամեն տարի մարդկությունն ունի առողջ կյանքից մոտ երեք միլիոն տարվա կորուստ (կորսված տարիների ցուցանիշը հաշվարկվում է որպես անհատի առողջ կյանքից հիվանդության, հաշմանդամության կամ մահվան պատճառով կորցրած տարիների գումար): Ամենամյա բեռը, կապված բշտային

էխինոկոկոզի բուժման և անասնապահական արտադրության կորուստների հետ, գնահատվում է 3 միլիարդ ԱՄՆ դոլար: Այս հելմինթոզների նկատմամբ իրականացվող կանխարգելիչ միջոցառումները պետք է ներառեն բժշկական և անասնաբուժական համալիր միջոցառումներ՝ համաձայն «Մեկ առողջություն» մոտեցման:

2021 թվականին իրականացված պետական վերահսկողության արդյունքների նախնական ամփոփումից հետո պարզ է դարձել, որ ոլորտում դեռևս առկա են խնդիրներ, որոնց լուծման ուղղությամբ պետք է ձեռնարկվեն անհրաժեշտ միջոցառումներ: Որպես ոլորտում առկա ռիսկեր՝ կարող ենք առանձնացնել Հայաստանի Հանրապետությունում գոտիավորման, կենդանիների համարակալման բացակայությունը, բակային մորթի առկայությունը, վարակիչ հիվանդությունների արձանագրման դեպքում անկաժ կենդանիների համար փոխհատուցման կանոնակարգման թերությունները, ինչպես նաև կենդանիների մոտ բրուցելլոզով, դաբաղով և լեշմանիոզով վարակվածության դեպքերի արձանագրումը:

Ռիսկերի նվազեցման նպատակով՝ 2022 թվականին հանրապետության բոլոր անապահով և վարակման տեսակետից վտանգված տնտեսություններում նախատեսվում է կազմակերպել վարակիչ հիվանդությունների դեմ արդյունավետ պայքար, ինչպես նաև անցկացնել մարդկանց և կենդանիների շրջանում հիվանդության տարածման կանխարգելման և վերացման միջոցառումներ, մասնավորապես՝

- հանրապետությունում առկա խոշոր և մանր եղջերավոր կենդանիների համարակալում, ինչը հնարավորություն կտա վերահսկել կենդանիների շարժը և կբացառի կենդանիների տերերի կողմից հիվանդ կենդանիների թաքցնելը,

- հիվանդ կենդանիների մորթի իրականացում կենտրոնացված ձևով (սպանդանոցում),

- հիվանդության հետևանքով սանիտարական սպանդի ենթարկված կենդանիների սեփականատերերին փոխհատուցման տրամադրում և այլն:

ԲՈՒՍԱՍԱՆԻՏԱՐԻԱ

Համաշխարհային տնտեսության գլոբալացումը, նոր գործընկեր երկրների ի հայտ գալը, բացի տնտեսական օգուտներից, բերում է նաև բացասական հետևանքներ, որոնք Հայաստանում, հատկապես գյուղատնտեսության ոլորտում, ծայրահեղ բացասական երևույթներ են առաջացնում: Համաձայն Համաշխարհային բանկի և ՄԱԿ-ի պարենի և գյուղատնտեսության կազմակերպության (FAO) կողմից կատարված հետազոտությունների՝ այնպիսի երկրներ, ինչպիսիք են Հնդկաստանը, ԱՄՆ-ը, Մեծ Բրիտանիան, բույսերի կարանտին վնասակար օրգանիզմներից տասնյակ միլիարդավոր դոլարի հասնող վնասներ են կրում (Հնդկաստան՝ 90,1 մլրդ, ԱՄՆ՝ 67,3 մլրդ, Բրազիլիա՝ 42,6 մլրդ, Ավստրալիա՝ 6,5 մլրդ, Մեծ Բրիտանիա՝ 4,36 մլրդ և այլն): Ելնելով վերոնշյալից և հաշվի առնելով մեր հարևան երկրներում և այլ առևտրային գործընկեր-երկրներում տիրող կարանտին բուսասանիտարական վիճակը (ինչպես արդեն հայտնաբերված, այնպես էլ բացակայող և սպասվող բույսերի կարանտին վնասակար օրգանիզմների ներթափանցման հավանականությունը)՝ մշտապես արդիական է հանրապետության բուսասանիտարական վիճակին լիարժեքորեն տիրապետելու հարցը, որին հասնելու նպատակով՝ անհրաժեշտ է իրականացնել ամենամյա բուսասանիտարական մշտադիտարկում՝ բացահայտելու համար Հայաստանի Հանրապետության տարածքում բույսերի կարանտին վնասակար օրգանիզմների առկայությունը և ճշգրտելու դրանց տարածվածության արեալները: Այս համատեքստում նշված միջոցառումը հանդիսանում է բուսասանիտարիայի բնագավառի հիմնական ընթացիկ գործառույթներից մեկը:

Գյուղատնտեսական արտադրանքի որակը և բարձր ծավալներն ապահովելու անքակտելի մասն է կազմում բույսերի վնասակար օրգանիզմների դեմ արդյունավետ պայքարի միջոցառումների կազմակերպումը, և, այս առումով, ոչ միայն կարևոր է նշված միջոցառումներն իրականացնել ժամանակին և ճիշտ եղանակով, այլև անհրաժեշտ է կիրառել պատշաճ որակի պեստիցիդներ, իսկ մշակաբույսերի աճեցման գործընթացում ապահովել անհրաժեշտ որակի ագրոքիմիկատների օգտագործումը: Ներկայումս հանրապետությունում օգտագործման համար թույլատրված պեստիցիդների և ագրոքիմիկատների անվանացանկը պարբերաբար համալրվում է նոր ապրանքատեսակներով, որոնց որակը և համապատասխանությունը վերահսկվում է դրանց պետական գրանցման գործընթացում՝ միջգերատեսչական հանձնաժողովի մասնագիտական եզրակացության հիման վրա: Միևնույն ժամանակ անհրաժեշտություն է

առաջանում պարբերաբար վերահսկել Հայաստանի Հանրապետության տարածքում իրացվող պեստիցիդների և ագրոքիմիկատների որակը և դրանց համապատասխանությունը Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջներին: Այս ամենը կանխորոշում է նշված ապրանքների վաճառակետերի պարբերական դիտարկման անհրաժեշտությունը:

Վերը նշված երկու միջոցառումների կատարումից բխում է բնակչությանը անվտանգ և առողջ սննդով ապահովումը: Կարևոր է նաև Հայաստանի Հանրապետությունում արտադրված և շուկայահանված բուսական ծագման արտադրանքում մարդու առողջության համար վտանգ ներկայացնող պեստիցիդների, նիտրատների ու ծանր մետաղների մնացորդային քանակների, ինչպես նաև պոտենցիալ վտանգ ներկայացնող գենետիկորեն ձևափոխված օրգանիզմների պարունակության վերահսկողությունը՝ հավաստիանալու համար, որ տեղական արտադրության բուսական ծագում ունեցող սննդամթերքում դրանք չկան կամ վերջիններիս պարունակությունը չի գերազանցում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված մնացորդային քանակները:

Ելնելով պլանավորվող միջոցառումների տրամաբանությունից՝ բուսասանիտարիայի բնագավառում Ծրագրի շրջանակներում նախատեսվում է իրականացնել՝

1. բույսերի կարանտին վնասակար օրգանիզմների հայտնաբերում՝ բուսասանիտարական մոնիթորինգի արդյունքների հիման վրա, դրանց օջախների և տարածման արեալների որոշում, դրանց դեմ պայքարի միջոցառումների առաջարկի ներկայացում, հանրապետության ընթացիկ բուսասանիտարական վիճակի տիրապետում և բույսերի կարանտին վնասակար օրգանիզմների տարածման արեալների վերահսկում և կառավարում,

2. հանրապետությունում իրացվող պեստիցիդների և ագրոքիմիկատների նկատմամբ վերահսկողության իրականացում, օրենսդրության պահանջներին դրանց համապատասխանության ստուգում, խախտումների բացահայտում և օրենսդրությունից բխող համապատասխան միջոցների կիրառում, անվտանգ և պատշաճ որակի արտադրանքի իրացման ապահովում: 2022 թվականին բուսասանիտարիայի բնագավառում գործունեություն իրականացնող տնտեսավարողների մոտ նախատեսվում է իրականացնել մոտ 45 ստուգում,

3. *բուսական ծագման մթերքներում մարդու առողջության համար պոտենցիալ վտանգ ներկայացնող որոշ նյութերի պարունակության վերահսկողություն, գենետիկորեն ձևափոխված օրգանիզմների առկայության և սահմանված պահանջներին դրանց համապատասխանության բացահայտում, բնակչությանը անվտանգ և առողջ բուսական ծագման սննդամթերքով ապահովում:

* Սույն միջոցառման իրականացումը հնարավոր է, եթե այն ընդգրկվի 2022 թվականի պետական բյուջեում:

ՎԵՐԱՀՍԿՎՈՂ ՈԼՈՐՏՈՒՄ ԻՐԱՎԻՃԱԿԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԱՌԿԱ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԻ ԲԱՑԱՀԱՅՏՈՒՄԸ

Նախորդ տարիներին իրականացված բուսասանիտարական մոնիթորինգի արդյունքները ցույց են տվել, որ տարեցտարի հանրապետությունում ավելանում են վարակված գոտիները: Վարակի օջախներ հայտնաբերելու դեպքում, համապատասխան մարզային կենտրոնի տեսուչների կողմից տրամադրվում է խորհրդատվություն՝ սկսած կանխարգելիչ միջոցառումներից մինչև վնասակար օրգանիզմների դեմ պայքարի եղանակները: Բուսասանիտարական մոնիթորինգի արդյունքում մինչև տարվա ավարտը կազմվում է երկրի կարանտին-բուսասանիտարական վիճակի վերաբերյալ հաշվետվություն, որն ուղարկվում է առևտրային գործընկեր երկրներին, ինչը Բույսերի պաշտպանության միջազգային համաձայնագրի պահանջ է:

Հայաստանի Հանրապետությունում իրացվող պեստիցիդների և ագրոքիմիկատների նկատմամբ հսկողությունը տեսչական մարմինն իրականացնում է ամեն տարի: Նախորդ տարիներին իրականացված դիտարկումների արդյունքում հայտնաբերվել են ինչպես ժամկետանց, այնպես էլ անորակ, չգրանցված և մականշման խախտումներով իրացվող պեստիցիդներ: Ուստի անհրաժեշտ է նշված վերահսկողական միջոցառումներն իրականացնել ամեն տարի, որպեսզի հողօգտագործողներին զերծ պահենք Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջներին չհամապատասխանող պեստիցիդների և ագրոքիմիկատների օգտագործումից:

Այսօր Հայաստանի Հանրապետությունում առաջնային արտադրությունում որակի կառավարման ծրագրեր չեն կիրառվում, այդ է պատճառը, որ պեստիցիդների և ագրոքիմիկատների օգտագործման օրինակելի ձևաչափեր չկան, ինչը ռիսկային գործոն է՝ բուսական ծագում ունեցող սննդամթերքում մնացորդային քանակների առկայության տեսանկյունից:

Դեռևս 1970 թվականի սկզբներին Հայաստանում արգելվել է վտանգավոր քլորօրգանական պեստիցիդների օգտագործումը, ինչը հանգեցրել է հանրապետության տարածքում ժամկետանց և արգելված պեստիցիդների պաշարների կուտակմանը: 80-ականների սկզբին դրանց թաղման համար Հայաստանում առանձնացվել է հատուկ տարածք: Ստեղծվել է արտակարգ իրավիճակ: Տարածքը գտնվում է սողանքային գոտում, հողը սահում է, վտանգավոր նյութերն էլ հասնում են հարակից բնակավայրեր, որտեղ կան գյուղատնտեսական նշանակության հողեր, որտեղ զբաղվում են հողագործությամբ: Միաժամանակ, Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ կարգավորվում է նաև գենետիկորեն ձևափոխված օրգանիզմների առկայությունը: Հատուկ նշանակության սննդամթերքում արգելվում է օգտագործել գենետիկորեն ձևափոխված օրգանիզմների պարունակությամբ սննդամթերք, իսկ գենետիկորեն ձևափոխված օրգանիզմների օգտագործման մասին պարտադիր նշումը մականշման ուղղակի պահանջ է: Վերջին տարիներին, հաշվի առնելով լաբորատոր փորձաքննությունների իրականացման անհնարինությունը, գենետիկորեն ձևափոխված օրգանիզմների պարունակության ուսումնասիրություններ չեն անցկացվել:

Հայաստանի Հանրապետությունում մնացորդային նյութերով աղտոտվածության ուսումնասիրության ծրագրեր նախկինում չեն իրականացվել, առաջնային հումքի իրացման շուկան պետական վերահսկողության առաջնային թիրախներից չի եղել, ուստի այժմ անհրաժեշտ է բուսական ծագում ունեցող մթերքներում մնացորդային քանակների մոնիթորինգ իրականացնել թե՛ հանրապետության մակարդակով, թե՛ ըստ մարզերի՝ պահպանելով հետազոտելիության սկզբունքը և բացահայտելով աղտոտման աղբյուրներն ու պատճառները:

ՍԱՀՄԱՆԱՅԻՆ ՊԵՏԱԿԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետության պետական սահմանային անցակետերում Տեսչական մարմինը, իր կազմում գործող 5 սահմանային հսկիչ կետերի միջոցով, իրականացնում է Հայաստանի Հանրապետության պետական սահմանով իրավաբանական և ֆիզիկական անձանց, անհատ ձեռնարկատերերի կողմից ներմուծվող և արտահանվող (վերաարտահանվող) սննդամթերքի, Հայաստանի Հանրապետության կառավարության հաստատած ցանկով սահմանված սննդամթերքի հետ անմիջական շփման մեջ գտնվող նյութերի, անասնաբուժական և բուսասանիտարական հսկման ենթակա ապրանքների Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված պահանջներին (արտահանման և վերաարտահանման դեպքերում՝ նաև ներմուծման երկրի սահմանած պահանջներին) համապատասխանությունը պարզելու և Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված դեպքերում և կարգով դրանց ներմուծմանը, արտահանմանը և տարանցիկ փոխադրմանն ուղղված վերահսկողական միջոցառումներ, իսկ անհամապատասխանության դեպքում՝ ներմուծումը, արտահանումը և տարանցիկ փոխադրումը կանխելուն ուղղված վերահսկողական միջոցառումներ:

Սահմանային պետական վերահսկողության բնագավառում Ծրագրի իրականացման նպատակն է՝

1. հեշտացնել սահմանը հատող անձանց և ապրանքների օրինական շարժը՝ միաժամանակ ապահովելով Հայաստանի Հանրապետության սահմանային անվտանգության բարձր աստիճանը և ստեղծելով բոլոր նպաստավոր պայմանները անասնաբուժական, բուսասանիտարական և սանիտարակարանտինային հսկողության և վերահսկողության արդյունավետությունը բարձրացնելու համար,

2. ամրապնդել միջգերատեսչական համագործակցության արդյունավետությունը՝ այդ թվում ապահովելով անհրաժեշտ տեխնիկական միջոցներ պատասխանատու գործադիր մարմինների միջև սահմանային կառավարմանն առնչվող խնդիրների և սահմանի վերահսկողության իրականացման համար օպերատիվ ընթացակարգերի մասին համապատասխան տեղեկատվություն փոխանակելու համար,

3. Ի նպաստ անձանց և ապրանքների օրինական շարժի ապահովման՝ ամրապնդել Եվրասիական տնտեսական միության անդամ և երրորդ երկրների և այլ միջազգային գործընկերների միջև համագործակցությունը,

4. իրականացնել խորհրդատվական ծառայություններ սահմանային պետական վերահսկողության ոլորտի օրենսդրության պահանջների վերաբերյալ՝ արտաքին տնտեսական գործունեություն իրականացնողներին աջակցելու և լուսավորելու համար,

5. ապահովել արդի սարքավորումներ և կիրառել միջազգային չափանիշներ սահմանային կառավարման համար:

ՎԵՐԱՀՍԿՎՈՂ ՈԼՈՐՏՈՒՄ ԻՐԱՎԻՃԱԿԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԱՌԿԱ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԻ ԲԱՑԱՀԱՅՏՈՒՄԸ

Տեսչական մարմնի կողմից սահմանային պետական վերահսկողության գործառույթների իրականացման ընթացքում հաճախ առաջանում են հիմնականում Մաքսային Միության հանձնաժողովի որոշումների և ազգային օրենսդրության հակասությամբ պայմանավորված խնդիրներ: Բացի այդ, մինչ օրս կարգավորված չէ երրորդ երկրներից Հայաստանի Հանրապետության տարածք անասնաբուժական դեղամիջոցների ներմուծման իրավահարաբերությունները:

Անասնաբուժական հսկողության ենթակա բեռների ներմուծման թույլտվությունների ժամանակ առկա են խնդիրներ, մասնավորապես կապված Հայաստանի Հանրապետության երրորդ երկրների ռեեստրի կարգավորման հետ:

Վերոնշյալ խնդիրների կարգավորման ուղղությամբ 2022 թվականին նախատեսվում է իրականացնել հետևյալ քայլերը՝

1. համապատասխանեցնել Հայաստանի Հանրապետության ոլորտային օրենսդրությունը Մաքսային Միության հանձնաժողովի 2010 թվականի հունիսի 18-ի թիվ 317 որոշման պահանջներին, մասնավորապես՝ ներդաշնակեցնել անասնաբուժական հսկողության (վերահսկողության) ենթակա ապրանքների հաստատված ցանկերը, ինչը հնարավորություն կընձեռնի ԱՏԳ ԱԱ ծածկագրերով հստակ որոշել, թե ինչ փաստաթղթով պետք է ուղեկցվի բեռը, ռեեստրում գրանցում կամ գրավոր թույլտվություն պահանջվում է, թե ոչ,

2. սահմանային հսկիչ կետերի գործառույթներն արդյունավետ իրականացնելու նպատակով՝ սահմանային հսկիչ կետերին տրամադրել նոր և հզոր համակարգիչներ, տպիչ սարքեր և սկաններ, QR կոդը կարդացող սարքեր, որպեսզի հնարավոր լինի ստուգել

արտահանող երկրների կողմից տրված բեռն ուղեկցող փաստաթղթերի վրա առկա QR կոդի հավաստիությունը,

3. Հայաստանի Հանրապետության արտաքին առևտրի «Մեկ պատուհան» համակարգի ներդրման աշխատանքներն արագացնելու նպատակով (ռիսկի հաշվիչ, գումարների գանձումներ, լաբորատորիաների ընդգրկում, կարգադրագրեր), իրավական ակտերում փոփոխություններ կատարելու միջոցով, կանոնակարգել հաշվետվություններ կազմելու պահանջները, որոնց ներդրման արդյունքում սահմանային հսկիչ կետերը չեն կազմի ավելորդ հաշվետվություններ, կխնայեն ժամանակը, ինչն էլ իր հերթին կբացառի սահմանային հսկիչ կետերում տնտեսավարող սուբյեկտների կուտակումը:

2021 թվականին սահմանային հսկիչ 5 կետերում վերջնական ներդրվել է «Մեկ կանգառ, մեկ պատուհան» նոր համակարգը, բարեհաջող ավարտվել է դրա պիլոտային գործարկումը և այժմ սկսվելու է լիարժեք կիրառումը:

3. ԾՐԱԳՐԻ ՄՇԱԿՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՀԱՎԱՔԱԳՐՄԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԸ

Առավել ռիսկային որոշումները բացահայտելու, ինչպես նաև Ծրագրի արդյունավետությունը բարձրացնելու նպատակով՝ Տեսչական մարմինը տեղեկատվություն է հավաքագրել պետական, տեղական ինքնակառավարման մարմիններից, այլ կազմակերպություններից, քաղաքացիներից և այլ աղբյուրներից, մասնավորապես՝

1. հանրապետության մարզերում աճեցվող մշակաբույսերի ցանքատարածքների վերաբերյալ՝ համայնքապետարաններից, Հայաստանի Հանրապետության վիճակագրական կոմիտեի պաշտոնական հրապարակումներից,
2. հանրապետությունում իրացվող պեստիցիդների և ագրոքիմիկատների վաճառակետերի վերաբերյալ՝ Հայաստանի Հանրապետության էկոնոմկայի նախարարության պաշտոնական կայքէջից (Բույսերի պաշտպանության քիմիական և կենսաբանական միջոցների արտադրության և (կամ) վաճառքի Ծանուցման ենթակա հաշվառված տնտեսավարող սուբյեկտների ցանկ),
3. խոշոր հողատերերի վերաբերյալ՝ համայնքապետարաններից,

4. կենդանիների գլխաքանակի վերաբերյալ տեղեկատվության վերլուծություն՝ Հայաստանի Հանրապետության վիճակագրական կոմիտեի պաշտոնական կայքից,
5. Հայաստանի Հանրապետության ներմուծվող և արտահանվող ապրանքների վերաբերյալ՝ Պետական եկամուտների կոմիտեից,
6. արտադրանքի պետական գրանցման վերաբերյալ՝ Եվրասիական տնտեսական միության պետական գրանցման վկայականների միասնական ռեեստրից,
7. հեռախոսազանգերի և դիմում-բողոքների միջոցով,
8. լաբորատոր փորձաքննության արդյունքների վերլուծության արդյունքում,
9. զանգվածային լրատվամիջոցներից և համացանցից:

4.ՊԵՏԱԿԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ

Տեսչական մարմինը 2021 թվականի ընթացքում նախատեսել է իրականացնել 969 ստուգում, որոնցից 781-ը՝ բարձր ռիսկայնությամբ, 160-ը՝ միջին ռիսկայնությամբ և 28-ը՝ ցածր ռիսկայնությամբ տնտեսավարող սուբյեկտների մոտ: Ստուգումների միջին տևողությունը կազմել է 10 օր:

2021 թվականի տարեկան ծրագրով՝ 1-ին եռամսյակում նախատեսված է եղել 174 ստուգում: Կազմվել է 8 տեղեկանք խախտումներ չհայտնաբերելու վերաբերյալ:

Իրականացվել է ոչ պլանային 50 ստուգում: 14 ստուգման արդյունքում կազմվել է տեղեկանք խախտումներ չհայտնաբերելու վերաբերյալ:

Բացվել է 151 դիտարկման հրաման, որից 137-ը՝ կերակրի աղում յոդի պարունակության նկատմամբ պետական վերահսկողության շրջանակներում, շեղումներ են հայտնաբերվել 6 տնտեսավարողի մոտ: Այլ դիտարկումներով խախտումներ չեն հայտնաբերվել:

